ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶՐԱՀՈՎԻՏԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

No 17-Ն

«25» 12 2012

ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ 2013Թ. ՀԱՄԱՐ

Հիմք ընդունելով «Տեղական տուրքերի և վճարների մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ և 10-րդ հոդվածների և « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 18 -րդ կետի պահանջները ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

2013թ. թվականի համար համայնքում սահմանել տուրքերի և վճարների հետևյալ դրույքաչափերը:

1. ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինական նախագծին համապատասխան՝ նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլատրության համար տեղական տուրքը սահմանվում է՝
Հիմնական օբյեկտների համար
ա/ Մինչև 300 ք/մ ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում այգեգործական (ամառանոցային) տների ինչպես նաև մինչև 200 ք/մ ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների համար 7 500 դրամ

բ/ Սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված օբյեկտների համար՝
բ.ա./ 201-ից մինչև 500 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 15 000 դրամ
բ.բ./ 501-ից մինչև 1000 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 25 000 դրամ
բ.գ./ 1000 ք/մ և ավելի ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 35 000 դրամ
Ոչ հիմնական շինությունների տեղադրման համար
գ/ Մինչև 20 ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 1 500 դրամ:
դ/ 20 և ավելի ք/մ ընդհանուր մակերես ունեցող օբյեկտների համար 2 500 դրամ
2Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքների (բացառությամբ ՀՀ օրենսդրությամբ սահմանված շինության թույլտվության չպահանջող դեպքերի) համար, եթե սահմանված կարգով ճարտարապետաշինարարական նախագծով՝
չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերի ընդլայնող այլ կառույցների (այդ թվում ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ սենքերի գործառնական նշանակության փոփոխություն՝ 3000 դրամ:
3Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար տեղական տուրքը սահմանել 2 500 դրամ:
4Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝
1/ ոգելից խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ.

2/ ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝ 1500 դրամ:

5Համայնքի տարածքում

ա/ բացօթյա առևտուր կազմակերպելու թույլտվության համար տեղական տուրքը սահմանվում է յուրաքանչյուր օրվա համար 350 դրամ:

6Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, բաղնիքներին (սաունաներին) և խաղատներին, ժամը 24-00-ից հետո աշխատելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանել՝

ա/ առևտրի օբեկտների համար 25 000 դրամ:

7Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար մեկ քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝

ա/ այլ արտաքին գովազդի համար 1 000 դրամ:

բ/ դատարկ գովազդային վահանակների համար 700 դրամ:

8Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեներ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:

9Սույն որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ կետերով սահմանված դրույքաչափերի նկատմամբ կիրառվել է 0,5 գործակիցը:

10 Համայնքի տարածքում մարդատար տաքսու ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 10 000 դրամ:

11 Աճուրդ-մրցույթի մասնակցության վճարը ընթացիկ տարվա համար սահմանվում է 2 000 դրամ:

12. Համայնքի տարածքում աղբահանության վճարը սահմանել ամսեկան 250 դրամ յուրաքանչյուր տնտեսության հաշվով:

13. Համայնքի տարածքում շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքները կատարելու հետ կապված տեխնիկոտնտեսական պայմանները մշակելու և հաստատելու, շինարարության ավարտը փաստագրելու համար՝ տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճարը սահմանել 5000 դրամ:

Ավագանու անդամներ՝

Արամ Գասպարյան

Լալա Ափրեյան

Վաղինակ Ասատրյան

Հայկ Ղազարյան

Համայնքի ղեկավար Հ.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ԶՐԱՀՈՎԻՏԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

No 19-Ն «25» 12 2012

ՀԱՄԱՅՆՔԻ 2013թ.ԲՅՈՒՋԵԻ ՀԱՍՏԱՏՈՒՄԸ

Հիմք ընդունելով « Տեղական ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 3 -րդ կետի պահանջները ավագանին.

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հաստատել Զրահովիտ համայնքի 2013 թվականի վարչական բյուջեն եկամուտների և ծախսերի գծով 20 343.9 հազար դրամ, պահմանել համայնքի 2013 թվականի վարչական բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների հետևյալ չափերով

ա/

1 Հարկեր և տուրքեր	ընդամենը 3506.0 հազար դրամ
նույն թվում	
1/1 գույքային հարկեր անշարժ գույքից	2142.0 հազ.դրամ
այդ թվում	
գույքահարկ շենքերի և շինությունների,	232.0 հազ.դրամ
ա/ ֆիզիկական անձանցից	162,0 հազար դրամ
բ/ իրավաբանական անձերից	70,0 հազար դրամ
Հողի հարկ,	1910.0 հազ.դրամ
ա/ ֆիզիկական անձանցից	1900,0 հազար դրամ
բ/ իրավաբանական անձանցից	10,0 հազար դրամ
1/2 Գույքահարկ փոխադրամիջոցներից	1300,0 հազար դրամ
1/3 Ապրանքների օգտագործման և իրացման թույլտվության համար	64,0 հազար դրամ
այդ թվում	
տեղական տուրքեր	64,0 հազար դրամ,
շինությունների շինարարության թույլտվության համար	30,0 հազար դրամ որից՝
հիմնական շինությունների համար	30,0 հազար դրամ
շինությունների քանդման թույլտվություն	10,0 հազար դրամ
ծխախոտի վաճառքի թույլտվություն	12,0 հազար դրամ
խմիչքի իրացման համար	12,0 հազար դրամ
2/1 Դոտացիա	15967.9 հազար դրամ
ա/ պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիա	15967.9 հազար դրամ
3.Այլ եկամուտներ	870,0 հազար դրամ
3/3 գույքի վարձակալությունից մուտքեր	250,0 հազար դրամ,
հողերի վարձակալության Վարձավճարներ	250,0 հազար դրամ
3/5 վարչական գանձումներ	620,0 հազար դրամ
այդ թվում՝	
Մրցույթի մասնակցության վճարներ	120,0 հազար դրամ

3/6 Աղբահանության վճարներ 500,0 հազար դրամ

Սահմանել Զրահովիտ համայնքի 2013թվականի վարչական բյուջեից հատակացումները ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման հետևյալ չափերով՝

1.	01-1-1 Օրենսդիր և գործադիր մարմիններ	10991.0 հազ.դրամ
2.	01-3-3 Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	40.0 հազ.դրամ
3	01-6-1 Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ	150.0 հազ.դրամ
4.	05-1-1 Աղբահանություն	900.0 հազ.դրամ
5.	06.4.1 Փողոցների լուսավորություն	800.0 հազ.դրամ
6.	08-1-1 Սպորտային միջոցառումներ	50.0 հազ.դրամ
7.	09-1-1 Նախադպրոցական Կրթություն	5500.0 հազ.դրամ
8.	10-7-1 Սոցիալական Հատուկ Արտոնություններ	1150.0 հազ.դրամ
9.	11-1-2 ՀՀ Համայնքների Պահուստային ֆոնդ	762.9 հազ.դրամ

Սահմանել 2013թ-ի Վարչական բյուջեի հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակները ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների հետևյալ չափերով՝

		հազ.դրամ
4111	աշխատավարձ	10200,0
4211	Գործառնական և բանկային ծառայություն	20,0
4212	էներգետիկ ծառայություններ	1200,0
4214	կապի ծառայություններ	400,0
4215	ապահովագրական ծախսեր	26.0
4221	ներքին գործուղում	100,0
4232	համակարգչային ծառայություններ	40.0
4234	տեղեկատվական ծառայություն	150.0
4252	մեքենաների ընթացիկ նորոգում	50,0
4261	գրասենյակային նյութեր	150,0
4264	տրանսպորտային նյութեր	300,0
4267	Կենցաղային և տնտեսական նյութեր	100.0
4637	ընթացիկ դրամաշնորհ ՀՈԱԿ-ներին	5500,0
4726	հուղարկավորման նպաստներ	250,0
4729	այլ նպաստներ	900,0
4819	նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	180,0
4823	պարտադիր վճարներ	15.0
4891	պահուստային միջոցներ	762.9

բ/

Հաստատել Զրահովիտ համայնքի 2013 թվականի Ֆոնդային բյուջեն եկամուտների և ծախսերի գծով 3849.3 հազար դրամ, սահմանել համայնքի 2013 թվականի Ֆոնդային բյուջեի եկամուտները ըստ առանձին եկամտատեսակների հետևյալ չափերով.

Վարչական բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդից մուտք Ֆոնդային բյուջե 363.3 հազ դրամ

Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ,
որն ուղղվում է ծախսերի ծածկմանը 3486.0 հազ դրամ

Ընդամենը 3849.3 հազ.դրամ

Հաստատել Զրահովիտ համայնքի 2013թվականի Ֆոնդային բյուջեից հատակացումները ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման հետևյալ չափերով՝

1. 01.1.1 Օրենսդիր և գործադիր մարմիններ 3349.3 հազ.դրամ
2. 04.2.4 Ոռոգում 500.0 հազ.դրամ

Հաստատել 2013թ-ի Ֆոնդային բյուջեի հատկացումների հաշվին ֆինանսավորվող ծախսատեսակները ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների հետևյալ չափերով՝

5113- Շենք-շինությունների կապիտալ վերանորոգում 3500.0 հազ. դրամ
5122 Վարչական սարքավորումներ 349.3 հազ.դրամ

Ավագանու անդամներ՝

Արամ Գասպարյան

Լալա Ափրեյան

Վաղինակ Ասատրյան

Հայկ Ղազարյան

ԳԱՐԻՆԱՊԵՏ Հ.Ղազարյան